



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ  
ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ս. Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ

ԻՆՏԵՆՍԻՎ ԹՈՋՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ  
ԺՈՂՈՎՐԴԱՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ  
1957



100



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ս. Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական աղագ

636.5 (47.925)

449

ԻՆՏԵՆՍԻՎ ԹՈՋՆԱԲՈՒՇՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

II 2452

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ե Ր Ե Վ Ա Ն

1957



**С. К. КАРАПЕТЯН**

**Действительный член Академии наук Армянской ССР**

**Народнохозяйственное значение интенсивного  
птицеводства и перспективы его  
развития в Армении**

**(На армянском языке)**

**Общество по распространению  
политических и научных знаний**

**Армянской ССР**

**Ереван — 1957**

ԻՆՏԵՆՍԻՎ ԹՈՋՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՏԵՏԵՍԱԿԱՆ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Նախառևտրյուցիոն շրջանում թռչնաբուծությունը մեր երկրում երկար ժամանակ եղել է գյուղատնտեսության հետամնաց ճյուղերից մեկը: Միայն Սովետական կարգեր հաստատվելուց հետո սկիզբ դրվեց հանրային, արդյունաբերական թռչնաբուծությանը: Հատկապես վերջին տարիներս մեծ աշխատանք է կատարվել կուլտնտեսություններում և սովխոզներում թռչնաբուծության զարգացման ուղղությամբ:

Մինչպատերազմյան շրջանի համեմատությամբ մեր երկրում թռչունների գլխաքանակը կուլտնտեսություններում ավելացել է երեք անգամ, ինկուբատորային-թռչնաբուծական կայանների ցանցն ընդլայնվել է ավելի քան 4 անգամ:

Սովետական Միության առաջավոր մարզերի և ռեսպուբլիկաների շատ կուլտնտեսություններում կազմակերպվել են խոշոր թռչնաբուծական ֆերմաներ, յուրաքանչյուրը մի քանի հազար գլխաքանակով: Այսպես, օրինակ, Վորոնեժի մարզի կուլտնտեսություններում թռչունների գլխաքանակը ֆերմաներում միջին հաշվով կազմում է 3000 գլուխ, իսկ Կրասնոդարի մարզում՝ 10 հազարից ավելի: Նկատելիորեն ավելացել է թռչունների գլխաքանակը և նրանց մթերատվությունը սովխոզներում: Թռչունների մթերատվության բարձրացման գործում առանձնապես աչքի ընկնող հաջողու-

թյուններ են ձեռք բերել թռչնաբուծական ֆաբրիկաները — ինտենսիվ թռչնաբուծության այդ առաջավոր և շահութաբեր ձեռնարկությունները:

Հանրային թռչնաբուծության զարգացման բնագավառում ձեռք բերված նվաճումները անվիճելի են, սակայն պետք է նշել, որ ձվի և թռչունի մսի արտադրության մակարդակը դեռ զգալիորեն ետ է մնում բնակչության օր-ավուր աճող պահանջմունքներից և չի համապատասխանում այն հսկայական հնարավորություններին, որ ունեն կոլեկտիվ ու պետական տնտեսությունները անասնաբուծության այդ կարևոր ճյուղի շեշտակի վերելքի համար:

Վերջին տարիներս Պարտիան և Կառավարությունը մեծ ուշադրություն են նվիրում թռչնաբուծության զարգացմանը: ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի Հունվարյան (1955 թ.) պլենումը խնդիր դրեց 1960 թվականին կոլտնտեսություններում և սովխոզներում գյուղատնտեսական թռչունների գլխաքանակը 1954 թվականի համեմատությամբ ավելացնել 2,5—3,0 անգամ և ամեն կերպ խրախուսել թռչնաբուծության զարգացումը կոլտնտեսականների, բանվորների և ծառայողների տնտեսություններում: Պլենումը պարտավորեցրեց ինկուբատորային-թռչնաբուծական կայաններին տարեկան թողարկել ոչ պակաս 500 միլիոն ճուռ՝ կոլտնտեսություններին և բնակչությանը վաճառելու համար:

Միաժամանակ պլենումը խնդիր դրեց բարելավել թռչունների կերակրումն ու խնամքն այն հաշվով, որ զգալիորեն բարձրանա հավերի ձվատվությունը և հասնի կոլտնտեսություններում ու սովխոզներում յուրաքանչյուր ածանից տարեկան առնվազն 110 հատի:

ՍՍՌՄ Մինիստրների Սովետը և ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեն «Երկրում անասնաբուծության հետագա զարգացման միջոցառումների և կոլտնտեսականների, բանվորների և ծառայողների տնտեսությունների կողմից պետությանը անասնաբուծական մթերքների պարտադիր հանձնումների նորմաների իջեցման մասին» որոշման մեջ անհրաժեշտ համարեցին կոլտնտեսություններում ունենալ թռչնաբուծական ֆերմաներ՝ հացահատիկային կուլտուրաների ցանքի յուրաքանչյուր 100 հեկտարին առ 1-ը հոկտեմբերի 1955 թվականի ոչ պակաս, քան 100—200 գլուխ ածան հավերով,

հաշվի առնելով : Եւանձին գոտիների առանձնահատկությունները :  
Թռչնաբուծության հետագա զարգացման և նրա մթերատվու-  
թյան բարձրացման հարցերն արժանացան նաև պարտիայի XX  
համագումարի ուշադրությանը : Համագումարի կողմից հաստատ-  
ված ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման վեցերորդ  
հնգամյա պլանի Դիրեկտիվներով նախատեսվում է 1960 թվակա-  
նին, 1955 թվականի համեմատությամբ, ձվի համախառն արտա-  
դրությունն ավելացնել 154%-ով, ընդլայնել գոյություն ունեցող  
թռչնաբուծական ֆերմաները և ստեղծել նորերը : Անասնաբուծու-  
թյան մյուս մթերքների համեմատությամբ ձվի համախառն արտա-  
դրության աճը հնգամյա պլանով անհամեմատ բարձր է նախա-  
տեսված :

ՍՄԿՊ XX համագումարի Դիրեկտիվներով նույն ժամանակա-  
շրջանի համար նախատեսված է մսի արտադրության աճը 100%,  
կաթինը՝ 95%, բրդինը՝ 82%, իսկ ձվինը, ինչպես նշվեց վերևում՝  
154% :

Համագումարի այդ առաջադրանքը կատարելու համար երկ-  
րում գոյություն ունեն ռեալ հնարավորություններ :

ՍՄԿՊ XX համագումարին տված հաշվետու զեկուցման մեջ  
ընկեր Ն. Ս. Խրուշչևը նշեց, որ «Մեր երկիրը անասնաբուծության  
ասպարեզում անհամար ռեզերվներ ունի : Եթե կոլտնտեսություն-  
ներում և սովխոզներում կազմակերպչական հաստատակամ աշ-  
խատանք ծավալվի, կարելի է մեկ-երկու տարում բացառիկ ար-  
դյունքների հասնել... Հարկավոր է կոլտնտեսություններում և սով-  
խոզներում ունենալ որքան կարելի է շատ հավեր, սագեր, բա-  
դեր...»<sup>1</sup> :

Անասնաբուծության մթերքների արտադրության ավելացման  
կարևորագույն խնդրի լուծման գործում մեծ նշանակություն ունեն  
թռչնաբուծության մթերքները՝ ձուն և թռչունի միսը :

Հավի ձուն, հավի և հնդկահավի միսը նույնպես, ինչպես և

<sup>1</sup> Ն. Ս. Խրուշչև — Սովետական Միության Կոմունիստական պարտիայի  
Կենտրոնական Կոմիտեի հաշվետու զեկուցումը պարտիայի XX համագումա-  
րին, էջեր 89, 93, Հայպետհրատ, Երևան, 1956 :

կաթն ու պտուղները, հանդիսանում են կարևորագույն դիետիկ սննդամթերքներ և բացառիկ նշանակություն ունեն բնակչության, մասնավորապես երեխաների լիարժեք սննդի համար:

## ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԹՌՉՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՎՈՐ ՓՈՐՁԻՑ

Թռչնաբուծությունը հանդիսանում է գյուղատնտեսական արտադրության ամենաարդյունավետ և եկամտաբեր ճյուղերից մեկը, եթե; իհարկե, նրան նվիրվում է անհրաժեշտ ուշադրություն: Այդ է վկայում ոչ միայն Սովետական Միության առաջավոր թռչնաբուծական տնտեսությունների փորձը, այլև արտասահմանյան մի շարք երկրների բազմամյա փորձը: Այն երկրներում, որտեղ թռչնաբուծությունը լայն զարգացում է ստացել, այդ ճյուղից ստացվող մթերքները ոչ միայն բավարարում են տվյալ երկրի բնակչության պահանջմունքը, այլև արտահանվում են այլ երկրներ, կազմելով էքսպորտի գլխավոր աղբյուրներից մեկը:

Միավորված Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ) Հնոմում գտնվող սեկցիան, որը կոչվում է ՖԱՕ (սննդի և գյուղատնտեսական մթերքների կազմակերպություն), ամեն տարի ամփոփագիր է հրատարակում գյուղատնտեսական արտադրության տարբեր ճյուղերի մասին թե՛ ըստ առանձին երկրների և թե՛ համաշխարհային մասշտաբով: 1955 թվականին հրատարակված ամփոփագրում տվյալներ են բերված նաև թռչնաբուծության վերաբերյալ:

Այդ տվյալների համաձայն, ձվի համաշխարհային արտադրությունը (չհաշված ՍՍՌՄ-ը) 1953 թվականին կազմել է 180,2 միլիարդ հատ: Նույն տվյալների համաձայն, 1948—1952 թթ. յուրաքանչյուր հավի տարեկան միջին ձվատվությունը կազմել է Կանադայում և ԱՄՆ-ում՝ 160—179 հատ, Բելգիայում, Դանիայում, Նիդերլանդներում (Հոլանդիայում), Ալյասկայում, Իսրայելում և Հավայան կղզիներում՝ 140—159 հատ և այլն: Հետաքրքիր տվյալներ են բերված ձվի արտադրության վերաբերյալ բնակչության մեկ շնչի հաշվով:

Տվյալներից երևում է, որ Դանիայում մեկ շնչին տարեկան արտադրվում է 529 ձուռ և այդ ցուցանիշով Դանիան գրավում է առաջին տեղը աշխարհում: Երկրորդ տեղը գրավում են Ամերիկայի Միացյալ Նահանգները (453 ձուռ), ապա գալիս են Իրլանդիան՝ 352 հատ, Կանադան՝ 302, Նոր Զելանդիան՝ 293, Նիդերլանդները՝ 268, Ավստրալիան՝ 252, Բելգիան՝ 245, Ֆրանսիան՝ 180, Մեծ Բրիտանիան՝ 166 հատ և այլն:

Ձվի արտահանության տեսակետից աշխարհում առաջին տեղը գրավում են Դանիան և Նիդերլանդները: Այդ երկրներից յուրաքանչյուրը տարեկան արտահանում է այլ երկրներ—գլխավորապես Անգլիա և Արևմտյան Գերմանիա — 80—90 միլիոն տոննա (կամ մոտ 1,6—1,8 միլիարդ հատ) ձուռ, այլ կերպ ասած՝ ավելի շատ, քան արտասահմանյան մյուս բոլոր երկրները միասին վերցրած: Իսկ ինչ է իրենից ներկայացնում Հոլանդիան (Նիդերլանդները): Իր տերիտորիայով (34 հազար քառակուսի կիլոմետր) նա համարյա թե հավասար է Հայկական ՍՍՌ-ին (29,8 հազար քառ. կմ), իսկ բնակչության թիվը կազմում է 10 միլիոն: Այդ երկրում 1953 թվականին արտադրվել է 2,7 միլիարդ, իսկ 1954 թվականին՝ 2,8 միլիարդ ձուռ: Հավերի գլխաքանակը հասնում է մոտ 16 միլիոնի:

Դանիան Հոլանդիայից փոքր ինչ մեծ է իր տերիտորիայով (43 հազ. քառ. կմ.), բայց բնակչության թիվը երկու և կես անգամ փոքր է (4,3 միլիոն):

Այդ երկրում տարեկան արտադրվում է ավելի քան 2 միլիարդ ձուռ (1953 թ.՝ 2,1 միլիարդ հատ): Հավերի գլխաքանակը 24 միլիոնից ավելի է:

«Համաշխարհային թռչնաբուծական գիտական ամսագրի» տվյալների համաձայն (1954, հատ. 10, № 2), հավերի գլխաքանակը ամբողջ աշխարհում (բացառությամբ մի քանի երկրների, որոնք մշտական հաշվառում չեն կատարում) 1954 թ. կազմել է 826,4 միլիոն: Եթե նկատի առնենք հաշվառման մեջ չընդգրկված երկրները նույնպես, ապա այդ թիվը կհասնի մոտ 1 միլիարդի, որի մոտ 44%-ը (439,2 մլն. գլուխ) գտնվում է ԱՄՆ-ում: ԱՄՆ-ում ձվի տարեկան արտադրությունը հասնում է 68,5 միլիարդ հատի և կազմում է համաշխարհային արտադրության 37,4%: Այսպիսի-

սով, արտասահմանյան մի շարք երկրների փորձը նույնպես, ինչպես և մեր երկրի առաջավոր տնտեսությունների փորձը, ցույց է տալիս, որ այնտեղ, որտեղ թռչնաբուծությանը պատշաճ ուշադրություն է նվիրվում, այն լայն զարգացում է ստանում և դառնում է գյուղատնտեսական արտադրության առաջատար ու ամենակամտարեր ճյուղերից մեկը:

Արտասահմանյան մի շարք երկրներում, ինչպես և Սովետական Միությունում, թռչնաբուծության այդպիսի բուռն զարգացման գործում մեծ դեր է խաղացել և շարունակում է խաղալ թռչնաբուծության ինտենսիվ սիստեմի կիրառումը, որին էլ նվիրված է մեր այս աշխատությունը:

### ԹՈՋՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՆՍԻՎ ԵՂԱՆԱԿԸ ԵՎ ՆՐԱ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գոյություն ունի թռչունների աճեցման և պահպանման երկու հիմնական եղանակ՝ այսպես կոչված էքստենսիվ եղանակ, երբ թռչունները պահում են սովորական թռչնանոցներում և նրանց կից բակերում (այդ եղանակը կոչվում է նաև ազատ, զբոսա-դաշտային եղանակ) և ինտենսիվ եղանակ, երբ թռչուններն աճեցվում և պահվում են հատկապես կահավորված վանդակներում, որոնք դասավորվում են մեկ-երկու հարկանի շենքերում: Էքստենսիվ եղանակը հնագույն և տարածված եղանակն է: Կոլտնտեսային թռչնաբուծական ֆերմաներում և շատ սովխոզներում կիրառվում է գրեթե սովորապես այդ եղանակը: Բայց նա ունի մի շարք թերի կողմեր, խոշոր գլխաքանակ պահելու համար պահանջվում է մեծ թվով շենքեր և հողային ընդարձակ տարածություններ, դժվարանում է աշխատատար պրոցեսների մեքենայացումը, չի հաջողվում լիովին վերացնել թռչնաբուծության մթերքների ստացման սեզոնայնությունը: Այս բոլոր հանգամանքները միասին վերցրած՝ բարձրացնում են մթերքների ինքնարժեքը և իջեցնում են տնտեսության այդ ճյուղի եկամտաբերությունը:

Ինտենսիվ եղանակը նոր է, ընդամենը մոտ երկու և կես

տասնամյակի պատմութիւնն ունի, բայց, չնայած համեմատաբար այդ կարճ ժամանակամիջոցին, արդեն անվիճելի են դարձել նրա մի շարք առավելութիւնները:

Այդ նոր, պրոգրեսիվ եղանակը հնարավորութիւն տվեց ստեղծելու արդյունաբերական տիպի խոշոր թռչնաբուծական ձեռնարկութիւններ—թռնաբուծական ֆաբրիկաներ, վերացնել ձվի և մսի արտադրութեան, ինչպես նաև մատղաշների աճեցման սեզոնայնութիւնը:

Ինտենսիվ եղանակը թռչնաբուծութեան տնտեսական շահավետութեան տեսակետից նույնպես անհամեմատ ավելի ձեռնտու է, քան էքստենսիվ եղանակը: Ինտենսիվ եղանակը հնարավորութիւն է տալիս զգալիորեն կրճատել շենքերի կառուցման վրա կատարվող ծախսերը, մի քանի անգամ ավելի խնայողաբար օգտագործել հողային տարածութիւնները շինարարութեան համար, մեքենայացնել հիմնական արտադրական պրոցեսները և բարձրացնել աշխատանքի արտադրողականութիւնը: Մեկ քառակուսի մետր արտադրական տարածութեան վրա ինտենսիվ եղանակի դեպքում պահվում է 4—5 անգամ ավելի մեծ գլխաքանակ, որով հնարավոր է դառնում ընդամենը մի քանի հեկտար տարածութիւն գրավող ֆաբրիկայում պահել ավելի քան 100 հազար թռչուն և տարեկան արտադրել մի քանի տասնյակ միլիոն ձու, հարյուրավոր տոննա թռչունի միս: Պետական թռչնաբուծական ֆաբրիկաների թիվը Սովետական Միութեան մեջ ներկայումս հասնում է մոտ 15-ի: Երկրի տարրեր մասերում կառուցվում են նորերը:

Վերջին մեկ-երկու տարում մեծ թափ է ստացել նաև կոլտնտեսային թռչնաբուծական խոշոր մեքենայացված ֆերմաների (ըստ էութեան՝ ֆաբրիկաների) կառուցումը, հատկապես Ստավրոպոլի երկրամասում, Մոսկվայի մարզում, Ուկրաինական, Բելոռուսական և Մոլդավական ՍՍՌ-ներում:

Ստավրոպոլի երկրամասի կոլտնտեսութիւններում 1955 թվականին կառուցվեցին 74 խոշոր մեքենայացված ֆերմաներ՝ կոլտնտեսային թռչնաբուծական ֆաբրիկաներ, յուրաքանչյուրը 20—55 հազար թռչուն տարողութեամբ:

Ածանցների տարեկան միջին ձվատվութիւնը այդ ֆերմանե-

րում արդեն հասել է մինչև 150—160 հատի։ Սկսված է նույնա-  
նման մի շարք նոր ֆերմաների կառուցումը, որոնց թիվը 1956  
թվականի վերջերին հասավ 120-ի։ Երկրամասի թռչնաբուծա-  
կան ֆերմաներում վանդակային սխառնամուսկուլային հավերի  
գլխաքանակը հասնելու է 1,5 միլիոնի, իսկ առաջիկա երկու-երեք  
տարում, ինչպես նշեց ՍՄԿՊ XX համագումարում ունեցած իր  
ելույթում պարտիայի Ստավրոպոլի երկրային կոմիտեի քարտու-  
ղար ընկ. Ի. Պ. Բոյցովը, ածան հավերի գլխաքանակը երկրա-  
մասի կոլտնտեսություններում հասնելու է 8 միլիոնի, որը հնարա-  
վորություն կտա ձվի արտադրությունը հասցնել 1,2 միլիարդ հա-  
տի, 1955 թվականին ստացված 85 միլիոն հատի փոխարեն։ Լայն  
թափ է ստացել խոշոր թռչնաբուծական ֆերմաների-ֆաբրիկա-  
ների կառուցումը ՌՍՖՍՌ-ում և Ուկրաինական ՍՍՌ-ում։ Ուկ-  
րաինայում սկսված է 46 այդպիսի ֆերմաների կառուցումը։ Նա-  
խագծեր են մշակված նաև համեմատաբար ավելի փոքր՝ 5 և 10  
հազար ածան հավի տարողությամբ մեքենայացված ֆերմաների  
կառուցման համար։

Պարտիայի XX համագումարում ունեցած իր ելույթում ՌՍՖՍՌ  
Մինիստրների Սովետի նախագահ ընկ. Մ. Ա. Յասնովը ասաց, որ  
Ստավրոպոլի երկրամասի օրինակով առաջիկա երկու-երեք տա-  
րում Ռուսաստանյան Ֆեդերացիայի կոլտնտեսություններում և  
սովխոզներում կստեղծվեն 1000-ից ավելի խոշոր մեքենայացված  
թռչնաբուծական ֆաբրիկաներ, որոնք հնարավորություն կտան  
արդեն 1957 թվականին կրկնապատկել արտադրվող ձվերի քա-  
նակը և զգալիորեն ավելացնել թռչունի մսի արտադրությունը։

Ինչպես տեսնում ենք, ինտենսիվ թռչնաբուծությունը գնալով  
ավելի ու ավելի մեծ ծավալ է ստանում երկրում, բայց պետք  
է ասել, որ դեռ կան ոչ փոքր թվով մասնագետներ և գիտնական  
թռչնաբույծներ, որոնք շարունակում են անհիմն վեճերը ինտենսիվ  
թռչնաբուծության էֆեկտիվության մասին, պնդելով, որ թռչուննե-  
րի աճեցումը վանդակներում կապված է մեծ բարդությունների հետ  
և դժվար կիրառելի է կոլտնտեսություններում ու սովխոզներում։

Որ ամեն մի գործ, ամեն մի նորություն ունի իր դժվարու-  
թյունները, դա անվիճելի է, բայց խոշոր թռչնաբուծական տնտե-

սովորյալների երկար տարիների փորձը ցույց տվեց, որ այդ մտա-  
վախով սովորյալը զուրկ է հիմքից և միայն արգելակում է թռչնաբու-  
ծության առաջավոր մեթոդների լայն տարածումն ու նրա զար-  
գացումը երկրում:

Ինտենսիվ թռչնաբուծության բազմաթիվ առավելությունները  
հաստատված են մի շարք խոշոր տնտեսությունների փորձով:  
Այստեղ մենք կանգ կառնենք երկու-երեք այդպիսի տնտեսությու-  
նների աշխատանքի փորձի վրա: Դրանցից մեկը Ստավրոպոլի երկ-  
րամասի Նովո-Ալեքսանդրովսկի շրջանի «Ռասիա» կոլտնտեսու-  
թյան թռչնաբուծական ֆերման է, մյուսը Մոսկվայի մարզի  
Տոմիլինյան թռչնաբուծական ֆաբրիկան է, իսկ երրորդը՝ Նրևանի  
նորակառույց թռչնաբուծական ֆաբրիկան:

Ստավրոպոլի երկրամասի Նովո-Ալեքսանդրովսկի շրջանի  
«Ռասիա» կոլտնտեսությունը 1954 թվականին առաջինը երկրում  
կառուցեց կոլտնտեսային խոշոր թռչնաբուծական ֆերմա և  
անցավ թռչուններ աճեցնելու և պահելու վանդակային սիստե-  
մին: Մինչ այդ կոլտնտեսության թռչունները պահվում էին 32 շեն-  
քում, իսկ ներկայումս 20 հազար ածան հավեր տեղավորված են  
մեկ շենքում, որի կառուցման համար կոլտնտեսությունը հատ-  
կացրեց 600 հազար ռուբ.: Դա կոլտնտեսային ֆաբրիկայի առա-  
ջին հերթն է, նրա լրիվ տարողությունը կազմում է 40 հազար  
թռչնատեղ:

Յուրաքանչյուր ածանից կոլտնտեսությունն ստանում է 150—  
160 ձու, իսկ մինչև ինտենսիվ եղանակին անցնելը հավերի միջին  
ձվատվությունը այդ նույն կոլտնտեսությունում կազմում էր 73  
հատ:

Ինտենսիվ եղանակի կիրառումը հնարավորություն տվեց չորս  
անգամ բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը: Եթե  
սովորական եղանակով թռչունները պահելու ժամանակ թռչնա-  
բուծական ֆերման սպասարկում էին 96 կոլտնտեսական, ապա  
ներկայումս ֆերման սպասարկող կոլտնտեսականների թիվը 24-ից  
չի անցնում:

1954 թվականին, մինչև ինտենսիվ եղանակին անցնելը, կոլ-  
տնտեսության թռչնաբուծական ֆերմայում թռչունները պահելու

վրա ծախսվել է 11.600 աշխօր, ծախսված խտացրած կերերի քանակը կազմել է 8600 ցենտ. և ստացվել է ընդամենը 760 հազար ձու (միջինը՝ յուրաքանչյուր ածանից 73 ձու): Ֆերմայի ընդհանուր դրամական եկամուտը կազմել է 877 հազար ռուբ.:

1955 թվականին, ինտենսիվ եղանակին անցնելուց հետո, թռչնաբուծական ֆերմայում ծախսված աշխօրերի քանակը կրճատվեց ավելի քան երկու անգամ և կազմեց ընդամենը 5.200 աշխօր: Մոտ երկու անգամ կրճատվեց ծախսվող խտացրած կերերի քանակը, կազմելով ընդամենը 4.200 ցենտ.: Չնայած խտացրած կերերի այդպիսի խնայողաբար օգտագործմանը, ձվի համախառն արտադրանքը ոչ միայն չպակասեց, այլև ավելացավ երկու և կես անգամ և հասավ 1.936 հազար հատի (միջինը՝ յուրաքանչյուր ածանից 150 ձու):

Ինտենսիվ եղանակի կիրառման շնորհիվ թռչնաբուծական ֆերմայում մոտ չորս-հինգ անգամ բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը:

Եթե սովորական եղանակով պահելու ժամանակ յուրաքանչյուր թռչնապահ սպասարկում էր 300—500 թռչուն, ապա ներկայումս պահելու վանդակային մեթոդին անցնելուց հետո, յուրաքանչյուր թռչնապահ սպասարկում է 1800—2000 գլուխ հասակավոր թռչուն:

Այս ամենի արդյունքը եղավ այն, որ այդ առաջավոր կոլտնտեսությունների թռչնաբուծական ֆերմայի դրամական եկամուտը 1955 թվականին, 1954 թ. համեմատությամբ, կրկնապատկվեց և հասավ 1,527 հազար ռուբ., այլ կերպ ասած՝ հենց առաջին տարում ոչ միայն լիովին ծածկեց թռչնաբուծական ֆերմայի կառուցման վրա կատարված արտադրական ծախսերը, այլև կոլտնտեսությունն ստացավ մոտ 900 հազ. ռուբլու զուտ դրամական եկամուտ:

Ինչպես հայտարարեց կոլտնտեսության նախագահ ընկ. Լիսկինը թռչնաբուծության գծով 1956 թ. փետրվարի սկզբին Մոսկվայում հրավիրված համամիութենական խորհրդակցությունում, 1956 թվականին ածան հավերի գլխաքանակը ֆերմայում 40 հազարից կանցնի, ձվի համախառն արտադրանքը կկազմի 4 միլիոն հատ,

յուրաքանչյուր հավի միջին ձվատվությունը կհասնի ոչ պակաս 160 հատի, միաժամանակ կարտադրվի 800 ցենտներ թռչունի միս: Կոլտնտեսության եկամուտը միայն թռչնաբուծությունից 1956 թվականին կկազմի 4 միլիոն ռուբ.: Լրիվ կարողությամբ աշխատելու դեպքում ֆերման 40 հազար ածան հավից տարեկան կըստանա մինչև 7 միլիոն ձու և մոտ 1000 ցենտ. թռչունի միս:

Համամիութենական խորհրդակցությունում ընկ. Լիսկինը պատմում էր, թե ինչպես, խոշոր մեքենայացված ֆաբրիկան կառուցելուց հետո, հիմնովին փոխվեց երիտասարդ կոլտնտեսականների և կոլտնտեսուհիների վերաբերմունքը դեպի թռչնաբուծությունը, նրանցից շատ շատերը ավարտելով միջնակարգ դպրոց, տեխնիկում և նույնիսկ ինստիտուտ, մեծ ցանկությամբ ու եռանդով աշխատում են ֆերմայում որպես թռչնապահներ, բրիգադիրներ և ղոռտեխնիկներ: Այդ կադրերը մեծ ուժ են հանդիսանում կոլտնտեսության համար և իրենց օրինակելի աշխատանքով բարձրացնում են արտադրության կուլտուրան:

Այժմ կանգ առնենք Տոմիլինյան թռչնաբուծական ֆերմայի աշխատանքի փորձի և նրա ձեռք բերած նվաճումների վրա:

Այդ ֆաբրիկան, որը գտնվում է Մոսկվայից ընդամենը 23 կմ հեռավորության վրա, կառուցվել է 1932 թվականին (առաջին թռչնաբուծական ֆաբրիկան ՍՍՌՄ-ում կառուցվեց 1931 թ. Մոսկվայում Բրատցկո կոչվող արվարձանում և կրում է Բրատցկյան թռչնաբուծական ֆաբրիկա անունը): Տոմիլինյան թռչնաբուծական ֆաբրիկան ներկայումս Միության մեջ ամենախոշորն է և, կարելի է ասել, ամենաօրինակելի թռչնաբուծական տնտեսությունը:

Տարբեր հասակի թռչունների միջին-տարեկան գլխաքանակը ֆաբրիկայում հասնում է մոտ 400 հազարի: 1955 թվականին սեփական ինկուբատորիայում ինկուբացվել է մոտ 1,8 միլիոն ձու և ստացվել է 1.480,8 հազար ճուտ: Դրանցից ֆաբրիկան ինքը աճեցրել է 894,3 հազար գլուխ, սեփական երամի համալրման համար, իսկ մոտ 587 հազար ճուտ վաճառվել է կոլտնտեսություններին, սովխոզներին և բնակչությանը՝ աճեցնելու համար:

Ածան հավերի միջին-տարեկան գլխաքանակը 100 հազարից անցնում է:

1956 թվականին ֆաբրիկան 150 հազար հավից ստացավ ավելի քան 30 միլիոն ձու և 985 տոննա թռչունի միս: Յուրաքանչյուր ածանի միջին ձվատվությունը կազմեց 203,6 ձու:

Այդպիսի բարձր ձվատվության գլխավոր պայմաններից մեկն այն է, որ թե՛ մայրական երամը և թե՛ հատկապես վանդակային ածանների երամը համալրվում է ամբողջ տարվա ընթացքում երիտասարդ հավերով՝ 5—6 ամսական վառեկներով, շնորհիվ այն բանի, որ ֆաբրիկայում ձվերի ինկուբացիան կատարվում է ամբողջ տարվա ընթացքում, գրեթե անընդմեջ (եթե նկատի չունենանք 30—45 օր տևող ընդմիջումը՝ ինկուբատորային պարկի պրոֆիլակտիկ վերանորոգման համար), որը հնարավորություն է տալիս տնտեսությունում ունենալու բոլոր հասակի մատղաշներ և ամեն ամիս կատարել երամի համալրում, միաժամանակ խոտանելով և մսամթերման հանձնելով ցածր մթերատվություն ունեցող ածանները:

Խոտանված թռչունները մսամթերման են հանձնվում 21—28 օր բտման դնելուց հետո: Մատղաշ աքաղաղները և վատ զարգացած վառեկները նույնպես մսամթերման են հանձնվում նախօրոք բտելուց հետո, որը ոչ միայն ավելացնում է մսի ելը և բարձրացնում որակը, այլև զգալիորեն իջեցնում է նրա ինքնարժեքը: Մեկ տարվա ընթացքում պետությանը հանձնած 600 հազար գլուխ թռչունի մսի 80%-ից ավելին ընդունվել է որպես բարձր և առաջին տեսակ: 1956 թ. ֆաբրիկան ստացավ 15,5 մլն. ո. մաքուր շահույթ:

Թռչունների այդպիսի բարձր ձվատվության կարևորագույն պայմաններից մեկն էլ այն է, որ այդ տնտեսությունում երկար տարիների ընթացքում մայրական երամի հետ տարվում է խորացած տոհմային-սելեկցիոն աշխատանք: Մայրական երամը սիստեմատիկաբար համալրվում է բարձր-մթերատու հավերով և լավագույն հավերի սերունդ հանդիսացող աքաղաղներով:

Մայրական երամում պահվում են, հիմնականում, տարեկան 200-ից ոչ պակաս ձվատվություն ունեցող հավեր, իսկ այդպիսի բարձր մթերատվություն ունեցող թռչուններից, կերակրման և

խնամքի նորմալ պայմաններում, ստացվում է տոհմային լավագույն հատկանիշներ ունեցող սերունդ: Ներկայումս ֆաբրիկայի մայրական երամի էլիտային խմբում կան 100-ից ավելի հավեր, որոնց տարեկան ձվատվությունը հասնում է 255-ից մինչև 270 հատի, իսկ առանձին հավերի ձվատվությունը 300 հատից էլ անցնում է: 1954 և 1955 թվականներին Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին ներկայացրած՝ Տոմիլինյան ֆաբրիկային պատկանող ռուսական սպիտակ ցեղի հավերն արժանացան առաջին աստիճանի դիպլոմի:

Բարձր-մթերատու և կենսունակ թռչունների երամ ստեղծելու վճռական պայմաններից մեկն էլ սանիտարական-պրոֆիլակտիկ միջոցառումների սխեմամանիկ կիրառումն է, որի շնորհիվ ֆաբրիկայում դրեթե լիովին վերացվել են թե՛ վարակիչ և թե՛ ոչ վարակիչ հիվանդությունները: Դա հնարավորություն է տալիս ապահովելու մատղաշների պահելու բարձր տոկոս: 1955 թվականին վանդակային սխեմով աճեցրած 710,5 հազար ճտից մինչև 60 օրական հասակը պահպանվեց 96,6%-ը, իսկ առանձին բրիգադաներ հասան է՛լ ավելի բարձր ցուցանիշների:

Այսպես, օրինակ, Օ. Ի. Կլյուկայի բրիգադայի ճտապահները 172,7 հազար ճտից մինչև երկու ամսական հասակը պահպանեցին 172.000 հատ, կամ 99,6%-ը: Ֆաբրիկայում հիմնական արտադրական պրոցեսները մեքենայացման են ենթարկված, սկսած ջրամատակարարումից, կերերի նախապատրաստումից, վերջացրած ձվերի տեսակավորումով, որը նույնպես կատարվում է հատուկ մեքենայի միջոցով: Ֆաբրիկայում հատուկ ուշադրություն է դարձվում ռացիոնալ և լիարժեք կերակրման վրա, որը վճռական դեր է խաղում թռչուններից բարձր մթերատվություն ապահովելու գործում:

Այդ ֆաբրիկայի բազայի վրա տարվում են լայն դիտահետազոտական աշխատանքներ, որոնց մասնակցում են թռչնաբուժական դիտահետազոտական ինստիտուտները, լաբորատորիաները, և ԲՈՒՀ-երի համապատասխան ամբիոնները: Գիտահետազոտական աշխատանքները տարվում են ֆաբրիկայի զոոտեխնիկական լաբորատորիայի և մասնագետների համագործակցությամբ:

Թույլատրվող ֆարիկաներում վանդակային հավերի կերակրման օրինակի նորմաներ (օրական մեկ գլխին) բուս Ն. Վ. Պիգարևի

| Վանդակային հավերի հասակային խմբերը                  | Միջին ծնունդ | Մարտիկի պրոպեր | Կալցիում | Ֆոսֆոր  | Նաքլիում | Վերամիջին          |      |                |
|-----------------------------------------------------|--------------|----------------|----------|---------|----------|--------------------|------|----------------|
|                                                     |              |                |          |         |          | A                  | D    | B <sub>2</sub> |
|                                                     |              |                |          |         |          | միլիգրգ. միավորներ |      |                |
| 5-8 ամսական զանգեներ                                | 70-72        | 15-16          | 3,5-4,0  | 1-1,2   | 0,4-0,5  | 4500               | 2500 | 450            |
| Մինչև 15 ամսական ածանցներ (ձվատվուլթյունը 40-60 %)  | 75-85        | 17-18,5        | 4,0-4,5  | 0,9-1,2 | 0,5-0,6  | 4200-5000          | 3000 | 230-250        |
| 15 ամսականից բարձր ածանցներ (ձվատվուլթյունը 30-50%) | 80-85        | 19-21          | 4,0-4,5  | 0,9-1,2 | 0,5-0,6  | 4200-5000          | 3000 | 230-250        |

Տոմիլինյան ֆաբրիկան կոլտնտեսություններին, սովխոզներին և, մասնավորապես, նոր կազմակերպված թռչնաբուծական ֆաբրիկաներին մեծ օգնություն է ցույց տալիս ինչպես տոհմային ձվեր կամ մատղաշներ մատակարարելու, այնպես էլ իր աշխատանքի դրական փորձը նրանց հաղորդելու միջոցով:

Տոմիլինյան թռչնաբուծական ֆաբրիկան հանդիսանում է Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցահանդեսի թռչնաբուծության պավիլիոնի մշտական ֆիլիալը. 1955 թվականին ֆաբրիկան այցելել և նրա փորձն ուսումնասիրել են ավելի քան 1000 էքսկուրսիստներ: Տոմիլինյան ֆաբրիկայի կոլեկտիվը և ղեկավարությունը մեծ օգնություն և օժանդակություն է ցույց տալիս էջմիածնի շրջանում կառուցված Երևանի թռչնաբուծական ֆաբրիկային:

1956 թվականի գարնանը և ամռանը Երևանի թռչնաբուծական ֆաբրիկան Տոմիլինյան ֆաբրիկայից աճեցնելու համար ստացավ և ինքնաթիռով փոխադրեց 25 հազար մեկ օրական ճուտ, և 15 հազար տոհմային ձու, որոնք ինկուբացիայի ենթարկվեցին Երեվանում: Դա հնարավորություն տվեց հիմնովին փոխելու մայրական կազմի գլխաքանակը լավորակ թռչուններով և տնտեսությունում հիմք դնելու տոհմաբուծական աշխատանքներին:

Տոմիլինյան թռչնաբուծական ֆաբրիկան, ինչպես ցույց են տալիս նրա աշխատանքի արդյունքները, ձեռք է բերել լուրջ նվաճումներ, բայց նրա կոլեկտիվը, որի անդամների ճնշող մեծամասնությունը այդ տնտեսությունում աշխատում է երկու տասնյակ տարուց ավելի, չի հանգստանում ձեռք բերածով և, անընդհատ կատարելագործելով արտադրության տեխնոլոգիական պրոցեսները, ինչպես նաև զոոտեխնիկական ու կազմակերպական աշխատանքի մեթոդները, ձգտում է ավելի բարձր ցուցանիշների:

Ֆաբրիկայի կոլեկտիվն իր առջև խնդիր է դրել 1958 թվականին հասակավոր հավերի գլխաքանակը հասցնել 200 հազարի, միջին ձվատվությունը՝ 210 հատի, արտադրել 40 միլիոն հատ ձու և մինչև 1150 տոննա թռչունի միս: Տոմիլինցիները միշտ էլ իրենց խոստումները պատվով են կատարում, ոչ մի կասկած չի կարող լինել, որ այս անգամ նույնպես նրանք հաջողությամբ կկատարեն ստանձնած պարտավորությունները:



**Օրինակելի կերաբաժին վաճառակային սխեմով անեցվող նսերի համար**  
**(Օրական մեկ գլխին՝ գրամներով)**

| Կերերի տեսակ                                         | Ճտերի հասակը օրերով |      |       |       |
|------------------------------------------------------|---------------------|------|-------|-------|
|                                                      | 1—6                 | 7—20 | 21—40 | 41—60 |
| Ծփած ձու . . . . .                                   | 1,0                 | —    | —     | —     |
| Հատիկային կերեր՝ ձավար և<br>չջարդված . . . . .       | 4                   | 8    | 15    | 25    |
| Հատիկային աղացած կերեր .                             | 2                   | 8    | 10    | 20    |
| Ցորենի թեփ . . . . .                                 | 1                   | 2,5  | 4,5   | 8     |
| Մսա-ոսկրային կամ ձկան ալյուր                         | —                   | 2    | 5     | 6,5   |
| Դրոժ . . . . .                                       | 0,2                 | 1,0  | 2     | 3     |
| Քոլսալ . . . . .                                     | —                   | 1    | 2     | 3     |
| Կանաչի (լավ է՝ առվույտ) .                            | 5                   | 10   | 20    | 30    |
| Ջրած կաթ . . . . .                                   | 5                   | 10   | 10    | 10    |
| Կավիճ կամ հին հանդած կիր<br>կամ խխունջի ալյուր . . . | 0,2                 | 0,6  | 1,5   | 2,0   |
| Կերակրի աղ . . . . .                                 | —                   | 0,1  | 0,2   | 0,3   |
| Ձկան յուղ . . . . .                                  | 0,1                 | 0,2  | 0,5   | 1,0   |
| Կերաբաժինը պարունակում է՝                            |                     |      |       |       |
| Մաքսվող սննդանյութեր (գրամ)                          | 5,8                 | 14,8 | 23,1  | 46,9  |
| Մաքսվող պրոտեին (գրամ)                               | 1,0                 | 3,4  | 6,8   | 10,4  |


ԵՐԵՎԱՆԻ ԹՈՋՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՖԱՐՐԻԿԱՆ ԵՎ ՆՐԱ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

1951 թվականին, Երևան քաղաքից 27 կիլոմետր հեռավորու-  
թյան վրա, էջմիածնի շրջանի Շահումյան գյուղից ոչ հեռու, էջ-  
միածնից Աշտարակ տանող խճուղու աջ կողմում սկսվեց Երևանի  
թռչնաբուծական ֆաբրիկայի կառուցումը, որը հանդիսանում է ին-  
տենսիվ թռչնաբուծության անդրանիկ օջախը Հայաստանում: Ըստ  
նախագծային հզորության, ֆաբրիկան պետք է ունենա 30 հազար  
գլուխ վանդակային ածան հավեր, մոտ 10 հազար գլուխ հավ  
մայրական երամում և, բացի դրանից, պետք է աճեցնի տարեկան  
մինչև 200 հազար գլուխ ձուտ:

Միաժամանակ, սեփական ինկուբատորիայում, իր պահանջից  
դուրս, ինկուբացիայի կենթարկվի մի քանի հարյուր հազար տոհ-  
մային ձու՝ կոլտնտեսություններին և բնակչությանը մեկ օրական  
ձտեր վաճառելու համար: Մայրական երամի պահպանման համար  
անհրաժեշտ 6 տիպային թռչնանոցները, իրենց զբոսարաններով,  
արդեն պատրաստ են: Այս տարի հիմնականում ավարտվելու է  
նաև գլխավոր արտադրական երկհարկանի շենքի կառուցումը, որ-  
տեղ աճեցվելու են մատղաշների մինչև երկու ամսական հասակը  
և պահվելու են վանդակային ածանները:

Սկսված է նաև երկրորդ արտադրական շենքի կառուցու-  
մը, որն ունենալու է մի շարք արտադրական ցեխեր, ինչպես, օրի-  
նակ, կոմբիկերերի, սպանդային, բամբակ, թռչնաղբի վերամշակ-  
ման և այլ ցեխեր: Թռչնաղբը վերամշակվելու է միզաթթու ար-  
տադրելու համար, որը շատ կարևոր և բարձրարժեք հումք է հան-  
դիսանում բժշկական արդյունաբերության համար (միզաթթվից  
ստացվում են կոֆեին և տեոբրոմին նյութերը): Յուրաքանչյուր  
տոննա թռչնաղբից ստացվում է մոտ 10 կգ միզաթթու՝ գորշ-  
դեղնագույն բյուրեղային փոշու ձևով:

1956 թվականի փետրվար ամսից ֆաբրիկայում մասսայական  
արտադրական փորձ դրվեց մեր պայմաններում ածանների վան-  
դակային պահպանության հետ կապված մի շարք հարցեր ուսում-  
նասիրելու և պարզելու նպատակով: Փորձի դրվեցին 3000 գլուխ



Երևանի Թռչնաբուծական Ֆաբրիկայի գլխավոր արտադրական շենքը,  
որի շինարարությունը հիմնականում ավարտված է: Տարողությունը  
25—30 հազար ածանցեր և 100 հազար ճուռ:

մոտ 8 ամսական վառեկներ, քանի որ ավելի երիտասարդ վառեկ-  
ներ տնտեսությունում չկային (սովորաբար վառեկները վանդակա-  
յին պահպանության են փոխադրվում 135 օրական հասակում,  
որպեսզի ձվադրումը սկսվի հենց վանդակներում): Փորձը ցույց  
տվեց, որ անհրաժեշտ պայմաններ ստեղծելու և ճիշտ կերակրում  
կազմակերպելու դեպքում, վանդակային պահպանման եղանակով  
Հայաստանի պայմաններում նույնպես կարելի է ստանալ բարձր  
ձվատվություն՝ ամսական յուրաքանչյուր հավից, միջին հաշվով,  
15—18 ճուռ: 1956 թվականի աշնանից վանդակային պահպանման  
փոխադրվեց 10.000 հավ:

1956 թ. մարտ ամսից Ֆաբրիկան անցավ նաև ճտերի աճեցման  
վանդակային եղանակին: Մինչև սեպտեմբերի 1-ը աճեցման է ըն-  
դունվել 61 հազար մեկ օրական ճուռ: Չնայած Ֆաբրիկայի ար-

տադրական կադրերը այդ ուղղությամբ դեռ անհրաժեշտ փորձ չունենին, և շինարարական աշխատանքները ձգձգվելու պատճառով ուշացավ ճտերը գաղութային պահպանության փոխադրելու գործը, այնուամենայնիվ մատղաշների աճեցումն ընթացավ հաջող, անկումները կազմեցին մոտ 6—7%: Վանդակային եղանակով (ավելի ճիշտ՝ վանդակային-գաղութային կոմբինացված եղանակով) աճեցրած վառեկները ձվատվությունն սկսեցին 5—5,5 ամսական հասակում, նրանք լավ զարգացած և առողջ, ամրակազմ թռչուններ են:

Ինչպես է կատարում ֆաբրիկան իր արտադրական պլանները և պետական պարտավորությունները:

1955 թվականին ձվի համախառն արտադրանքը կազմեց 1.037 հազար հատ, պլանը կատարվեց 122,4%-ով, յուրաքանչյուր հավի միջին ձվատվությունը հասավ 150 հատի:

Ձվի հանձնման պետական պարտավորությունը կատարվեց 133,3%-ով, մսի հանձնման պլանը՝ 100%-ով, միաժամանակ ապահովվեց թռչունների աճեցման պլանային առաջադրանքը: Առ 1-ը հունվարի 1956 թ. ֆաբրիկայում կար 10.626 ածան հավ:

ձսերի վանդակային աճեցման ժամանակ կիրառվող օրվա ներհին կարգը

| Ժ ա մ ե ր ը                | կատարվելիք աշխատանքը                                                                                                                 |
|----------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 7-ից 8-ը . . . . .         | Մաքրել կերամանները և բաշխել շոք կերային խառնուրդը:                                                                                   |
| 8-ից 9-ը . . . . .         | Ստուգել ճտերին վանդակներում, առանձնացնել թուլերին, կերը վատ ուտողներին և նրանց տեղափոխել առանձին վանդակ՝ հատուկ խնամք տանելու համար: |
| 9-ից 9—30 րոպե . . . . .   | Ճտերին տալ կերային թաց խառնուրդ:                                                                                                     |
| 9-30-ից 10-30 > . . . . .  | Մաքրել, լվանալ ջրամանները և լցնել թարմ, մաքուր ջուր:                                                                                 |
| 10-30-ից 11-00 > . . . . . | Տեսակավորել ճտերը:                                                                                                                   |
| 11-ից 11-45 > . . . . .    | Տալ ճտերին թաց կերային խառնուրդի երկրորդ մասը:                                                                                       |

| 1                       | 2                                                                       |
|-------------------------|-------------------------------------------------------------------------|
| 11-45-ից 12-00 րոպե . . | Մաքրել ճտանոցի աշխատանքային տեղը (վանդակների միջև ընկած տարածությունը): |
| 12-ից 14-00 » . .       | Ընդմիջում՝ ճաշի համար:                                                  |
| 14-ից 14-30 . . . .     | Տալ թաց կերային խառնուրդի երրորդ՝ վերջին բաժինը:                        |
| 14-30-ից 15-30 » . .    | Մաքրել վանդակները և հեռացնել թրուշ-նաղբը:                               |
| 15-30-ից 16-00 » . .    | Ջրամաններում նոր թարմ ջուր ավելացնել:                                   |
| 16-00-ից 16-45 » . .    | Տալ հատիկային կերերի խառնուրդը:                                         |
| 16-45-ից 17-00 » . .    | Երկրորդ անգամ մաքրել ճտանոցը:                                           |

Երեկոյան ժամը 5-ից մինչև մյուս օրվա առավոտյան ժամը 7-ը ճտանոցում աշխատում են գիշերային հերթապահները: Մի շարք զոոտեխնիկական միջոցառումների և, մասնավորապես, աշնան-ձմռան ամիսներին թռչնանոցներում լրացուցիչ լուսավորություն կիրառելու շնորհիվ զգալիորեն բարձրացավ հավերի ձվատվությունը:

Հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր լամիսների ընթացքում պետությունը հանձնվեց 283 հազ. ձու, նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ գրեթե երկու անգամ ավելի: Չորրորդ եռամսյակում ստացված այդպիսի բարձր ձվատվությունը հնարավորություն տվեց ոչ միայն ապահովելու ձվի արտադրության պլանի կատարումը, այլև զգալիորեն գերակատարելու այն:

1955 թվականի չորրորդ եռամսյակում ձեռք բերած հաջողությունները հնարավորություն տվեցին ֆաբրիկային մասնակցելու համամիութենական սոցիալիստական մրցույթյանը: ՍՍՌՄ Մսեղենի և կաթնեղենի արդյունաբերության մինիստրության կողմից, ի թիվս այլ ձեռնարկությունների, նշվեց նաև Երևանի թռչնաբուծական ֆաբրիկայի լավ աշխատանքը:

Օգտագործելով երկրի առաջավոր թռչնաբուծական տնտեսու-



Երևանի թռչնաբուծական ֆաբրիկա  
Մայրական երամի հավերը զրոսաբաղում:

Թյունների՝ Տոմիլինյան, Բրատցկյան, Գլբերովյան, Կունցկյան ֆաբրիկաների, Կուչինյան սելեկցիոն սովխոզի և մյուս առաջավոր թռչնաբուծական ֆաբրիկաների, սովխոզների ու կոլտնտեսությունների փորձը, ինչպես նաև գիտության յլերջին նվաճումները թռչնաբուծության բնագավառում, Երևանի թռչնաբուծական ֆաբրիկայի կոլեկտիվը անցած տարում իրականացրեց մի շարք միջոցառումներ՝ ձեռք բերած նվաճումներն ամրապնդելու և է՛լ ավելի ընդլայնելու թռչնաբուծական մթերքների արտադրությունը: 1956 թվականի առաջին եռամսյակում ձեռք բերած նվաճումների համար ՍՍՌՄ Մսեղենի և կաթնեղենի արդյունաբերության մինիստրության կողմից երկրորդ անգամ նշվեց Երևանի թռչնաբուծական ֆաբրիկայի կոլեկտիվի դրական աշխատանքը: Անցյալ տարվա համեմատությամբ, 1956 թվականի առ 1-ը հոկտեմբերի դրությամբ աճեցվել են մոտ երկու անգամ ավելի մատղաշներ:

Ածան հավերի գլխաքանակն ավելացել է 60%-ով և հասել է 16 հազարի: Անցյալ տնտեսական տարում՝ 1955 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1956 թ. հոկտեմբերի 1-ը արտադրվել է 1058 հազար ձու, նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ մոտ 200 հազար հատով ավելի: Յուրաքանչյուր հավից, միջին հաշվով, ստացվել է 153 ձու:

Կատարվել և գերակատարվել են ձվի ու մսի հանձնման և երամի համալրման տարեկան պլանները:


Այժմ, մի փոքր ավելի մանրամասն կանգ առնենք այն հարցի վրա, թե ինչպիսի կոնկրետ զոոտեխնիկական և կազմակերպական միջոցառումների կիրառման շնորհիվ է, որ ֆաբրիկան կարողացել է ձեռք բերել նշված նվաճումները:

Զոոտեխնիկական միջոցառումների սկիզբը դրվում է երամի ճիշտ համալրումով (կոմպլեկտավորումով): 1955 թվականի աշնանը կատարվեց թռչունների երամի ստուգում և համալրում. խոտանվեցին վատ զարգացած, թույլ, հիվանդ և ցածր մթերատու թռչունները: Ածանները տեղավորվեցին առանձին թռչնանոցներում ըստ հասակային խմբերի՝ վառեկները առանձին (նույնպես ըստ հասակի), հասակավոր հավերը առանձին: Աքաղաղները թռչնանոցներում կազմում են ածանների մոտ 10%-ը:

Հոտի կոմպլեկտավորումից առաջ կատարվում է անասնաբուժական մշակում, հիվանդ թռչունների հայտնաբերում և մեկուսացում, կատարվում են նաև պրոֆիլակտիկ սրսկումներ:

Զվատվության անհատական հաշվառում կատարելու նպատակով թռչունները համարակալվում են՝ աջ կամ ձախ ոտքին հադցընելով մետաղյա օղ, իսկ թռչնանոցներում դրվում են ստուգիչ ձվաբներ՝ յուրաքանչյուր 200 հավին մեկ ձվաբնի հաշվով (յուրաքանչյուր ստուգիչ ձվաբուն ունի 12 բաժանմունք՝ 12 հավի համար): Հաշվառումը կատարվում է ամեն օր և գրանցվում մատյաններում:

Թռչունները կերակրվում են նախօրոք կազմված կերաբաժիններով ելնելով ձվատվության պլանային առաջադրանքից, հաշվի



**Նրևանի թռչնաբուծական ֆաբրիկա**  
**Մայրական երամի հավերը դրոսաբաղում հովաքանի տակ:**

առնելով նաև նրանց կենդանի քաշը, հասակը, տարվա եղանակը և թռչունների ֆիզիոլոգիական վիճակը՝ փետրափոխության շրջանը, ինտենսիվ ձվատվության ու կարճատև դադարների շրջանը և այլն:

Կերաբաժինները կազմելիս մենք ուշադրություն ենք դարձնում նրանց լիարժեքության վրա, որպեսզի ապահովվի թռչունների պահանջը սննդանյութերի ընդհանուր քանակի, սպիտակուցների, կարևոր ամինոթթուների, վիտամինների և հանքային նյութերի նկատմամբ: Գիտական ուսումնասիրությունների հիման վրա պարզված է, թե մեկ ձու արտադրելու համար յուրաքանչյուր ածանիս, ելնելով նրա կենդանի քաշից, ինչպիսի՞ և ի՞նչ քանակի սննդանյութեր, վիտամիններ և հանքային նյութեր պետք է տալ:

Կերաբաժինները կազմելիս մենք ղեկավարվում ենք գիտականորեն հիմնավորված այդ նորմաներով, նրանց մեջ մտցնելով անհրաժեշտ ճշտումներ, ելնելով մեր տեղական բնակլիմայական

պայմաններից, ունեցած կերերի տեսակներից և սեփական փոր-  
ձերի ու դիտողությունների արդյունքներից:

Բերենք մի օրինակ: 1956 թվականի սեպտեմբերի կեսերին  
(13—17-ը) Ֆաբրիկայի № 6 թռչնանոցի հասակավոր ածանների  
համար կազմվեց հերթական հնգօրյա կերաբաժին, այն հաշվով,  
որ յուրաքանչյուր հավից ստացվի ամսական միջին հաշվով 12 ձու  
(40% ձվատվություն): Ինչպես երևում է ստորև բերած աղյուսա-  
կից, կազմած կերաբաժինը հիմնականում ապահովում է թռչուն-  
ների պահանջը, ինչպես սննդանյութերի, մասնավորապես մարս-  
վող պրոտեինի (սպիտակուցի), այնպես էլ հանքային նյութերի  
և վիտամինների նկատմամբ: Կերաբաժինը պարունակում է նաև  
անհրաժեշտ քանակի կարևոր ամինոթթուներ:

Աղյուսակում բերված կերաբաժնով կերակրվող թռչունների  
ձվատվությունը հնգօրյակի ընթացքում կազմեց մոտ 40%:

Դա ցույց է տալիս, որ կերաբաժինը ճիշտ էր կազմված:

Եվ շնայած արդեն սկսվել էր թռչունների մասսայական փետ-  
րափոխությունը, որի ժամանակ սովորաբար խիստ ընկնում է  
ձվատվությունը՝ կազմելով ամսական ոչ ավելի 5—6 ձու, շնորհիվ  
ճիշտ կազմած կերաբաժնի և նրա լիարժեքության, նույնիսկ մաս-  
սայական փետրափոխության շրջանում ապահովվեց մեկ ածանից  
ամսական 12 ձվի ստացում: № 6 թռչնանոցում 1420 ածանից  
հնգօրյակի ընթացքում ստացվեց 2779 ձու, կամ յուրաքանչյուր  
ածանից՝ 2 ձու: Այդ թիվը բազմապատկելով 6-ով (ամսվա մեջ  
եղած հնգօրյակների թվով), ստանում ենք ամսական ձվատվու-  
թյունը, որը ներկա դեպքում կազմում է 12 հատ:

Ֆաբրիկայում ձվատվության համախառն հաշվառումը կա-  
տարվում է ըստ թռչնանոցների ամեն օր, իսկ տոհմային-մայրա-  
կան ցեխերում ձվատվության անհատական հաշվառումը կատար-  
վում է ստուգիչ քների միջոցով: Ձվատվության ճշգրիտ հաշվա-  
ռումը հնարավորություն է տալիս ստուգելու կազմած կերաբաժնի  
լիարժեքությունը և հարկ եղած դեպքում հաջորդ հնգօրյակում  
մտցնելու անհրաժեշտ ուղղումները: Այդ միջոցառումը միաժամա-  
նակ հնարավորություն է տալիս արտադրական պլանների կատար-  
ման ընթացքը օպերատիվ կերպով ղեկավարելու և անհրաժեշտու-

Երևանի բուժֆաբրիկայի և 6 ցեխի ածանցների կերտարածիքի և բրտի ևնգորյակի համար ամսական յուրաքանչյուր ածանցից 12 ձու ստանալու հաշվով

|                                    | (հ) միտոչտի վմդի | 1 դ. կերքի մեջ<br>պարունակվում է |             |                                                      | 1 դ. կերքի մեջ<br>պարունակվում է |         |           | 1 դ. կերքի մեջ<br>պարունակվում է<br>(մեկըրորամ) |     |       |
|------------------------------------|------------------|----------------------------------|-------------|------------------------------------------------------|----------------------------------|---------|-----------|-------------------------------------------------|-----|-------|
|                                    |                  | (դ)                              |             |                                                      | մդ                               |         |           | A                                               |     |       |
|                                    |                  | դվդատմի ևսիոմոթ                  | մսիտվր վմդի | մդի և յուսի<br>- ճդուչուն մոյուչ<br>վմսիտվր վմդի կդր | յարմիլուի                        | մսֆուսֆ | յարմուսու | B <sub>2</sub>                                  |     |       |
| Գարի . . . . .                     | 60               | 4,60                             | 68,6        | 0,87                                                 | 31,5                             | 21,5    | 25,2      | —                                               | —   | 38    |
| Եգիպտացորեն . . . . .              | 6                | 0,48                             | 7,7         | 0,81                                                 | 0,6                              | 23,8    | 1,8       | 36                                              | —   | —     |
| Վարակ . . . . .                    | 10               | 1,26                             | 10,0        | 1,0                                                  | 12                               | 35      | 17        | —                                               | —   | 6     |
| Թեփ ցորենի . . . . .               | 20               | 1,90                             | 13,8        | 1,45                                                 | 26                               | 22,2    | 42        | —                                               | —   | 40    |
| Կոմբիկեր . . . . .                 | 10               | 0,73                             | 12,0        | 0,90                                                 | 14                               | 43      | 23        | —                                               | —   | 3     |
| Ջկան ալյուր . . . . .              | 3                | 1,20                             | 12,0        | 0,77                                                 | 153,6                            | 80,1    | 80,7      | 9                                               | 0,6 | 15    |
| Գուլսպ բամբակի . . . . .           | 10               | 3,23                             | 11,6        | 0,86                                                 | 31,0                             | 97,0    | —         | 40                                              | —   | 5,0   |
| Սոտի (առվուլտի) ալյուր . . . . .   | 5                | 0,55                             | 2,3         | 2,7                                                  | 52,5                             | 11      | 22,5      | —                                               | —   | 90    |
| Կանաչ առվուլտ . . . . .            | 30               | 0,66                             | 3,6         | 8,33                                                 | 138                              | 27      | 6         | 2700                                            | —   | 120   |
| Կերքի չոր դրոժ . . . . .           | 1,5              | 0,59                             | 1,8         | 0,81                                                 | 3,45                             | 18,9    | —         | —                                               | —   | 12    |
| Կերակրի աղ . . . . .               | 6,7              | —                                | —           | —                                                    | —                                | —       | 280       | —                                               | —   | —     |
| Հանգած կիլ . . . . .               | 5                | —                                | —           | —                                                    | 2365                             | —       | —         | —                                               | —   | —     |
| Կերպրածիքի պարունակում է . . . . . | 181,2            | 15,20                            | 142,7       | —                                                    | 2812                             | 288,2   | 497,4     | 2785                                            | 1,6 | 184,5 |

|                                  |      |     |   |   |      |     |     |      |     |     |
|----------------------------------|------|-----|---|---|------|-----|-----|------|-----|-----|
| Պահանջվում է ամսական 12 ձու ստա- |      |     |   |   |      |     |     |      |     |     |
| նալու համար . . . . .            | 15,0 | 133 | — | — | 2550 | 850 | 500 | 2500 | 3,5 | 190 |

թյան դեպքում լրացուցիչ միջոցառումներ մշակելու և կենսագործելու:

Զոոտեխնիկական կարևոր միջոցառումներից մեկն էլ հանդիսանում է ածանցների սիստեմատիկ ստուգումը և ոչ միջերատու թռչունների խոտանումը երամից: Մեր ֆաբրիկայում այդպիսի ստուգումներ կատարվում են ամսական ոչ պակաս մեկ անգամ: Բոլորովին չաժող, կամ շատ քիչ ձու տվող թռչունների խոտանումը (որոնք հանձնվում են մսամթերման) տնտեսում է կերերը, բարելավում է մնացած թռչունների պահպանման պայմանները, որի շնորհիվ ոչ միայն բարձրանում է հավերի միջին ձվատվությունը, այլև ավելանում է ձվի համախառն ելունքը և իջնում է նրա ինքնարժեքը:

Հավերի միջերատվության բարձրացման գործում մեծ դեր խաղաց ձվատվության սեզոնայնության վերացումը, որին ֆաբրիկան հասավ շնորհիվ լրացուցիչ լուսավորության մասսայական ներդրման (1955 թ. հոկտեմբերի կեսերից), ճիշտ կազմակերպված կերակրման և թռչունների խնամքի ու պահպանման պայմանների բարելավման:

Այդ միջոցառումների կենսագործման, մասնավորապես լրացուցիչ լուսավորությունն օգտագործելու շնորհիվ 1955/56 թթ. աշնան և ձմռան ամիսներին ֆաբրիկայում ստացվեց նույնպիսի բարձր ձվատվություն, ինչպիսին ստացվում է գարնան ամիսներին: Եթե 1954 թ. աշնան-ձմռան երեք ամսում (հոկտեմբեր-դեկտեմբեր), երբ տնտեսությունում լրացուցիչ էլեկտրական լուսավորություն չէր օգտագործվում, յուրաքանչյուր ածանց ստացվեց ընդամենը 18 ձու, կամ ամսական, միջին հաշվով, 6 ձու, ապա 1955 թ. նույն ամիսներին, երբ արդեն կիրառվում էր լրացուցիչ լուսավորություն, յուրաքանչյուր ածանց ստացվեց 34 ձու, կամ ամսական, միջին հաշվով, մոտ 12 ձու, այլ խոսքով ասած՝ երկու անգամ ավելի: Լրացուցիչ էլեկտրական լուսավորությունը մենք տալիս ենք այն հաշվով, որպեսզի Վոլյսային օրվա» ընդհանուր տևողությունը հասնի 15 ժամի, իսկ լուսավորության ինտենսիվությունը՝ թռչնանոցի յուրաքանչյուր քառակուսի մետր հատակին՝ 3—4 մոմ: Այսպես, օրինակ, տիպային թռչնանոցներն ունեն 72

մետր երկարություն և 5,5 մետր լայնություն, ուրեմն նրանց հատակի մակերեսը հավասար է 396 քառ. մետրի, կամ, կլորացրած թվով՝ 400 քառ. մետրի: Այդպիսի թռչնանոցում պետք է կախել 12—16 հատ 100 մոմանոց էլեկտրական լամպ, կամ 16—20 հատ 75 մոմանոց լամպ. եթե տնտեսությունում կան ավելի ուժեղ լամպեր, ապա նրանց թիվը համապատասխանորեն պակասում է և, ընդհակառակը, եթե եղած լամպերը թույլ են, նրանց թիվը պետք է ավելացնել: Օրինակ՝ եթե տնտեսությունում կան 300 մոմանոց լամպեր, տիպային թռչնանոցում բավական է կախել 5—7 հատ այդպիսի լամպ, իսկ եթե եղած լամպերը 40 մոմանոց են, պետք է կախել 40—50 հատ:

էլեկտրական լամպերը կախում են առաստաղից, հատակից 1,8 մետր բարձրությամբ, մեկ գծի վրա, թռչնանոցի ամբողջ երկարությամբ: Լամպերի վրա հազցվում են սպիտակ թիթեղից պատրաստված լուսամփոփներ՝ թե՛ թռչնանոցի հատակը և թե՛ թառերը լուսավորելու համար:

էլեկտրական լուսավորությունը թռչնանոցում միացնում են երեկոյան արևը մայր մտնելուց առաջ, երբ դեռ թռչնանոցը լրիվ չի մթնել, և առավոտյան լույսը բացվելուց 1—2 ժամ առաջ, այն հաշվով, որպեսզի, ինչպես ասվեց վերևում, «լույսային օրվա» ընդհանուր տևողությունը կազմի 15 ժամ: Հետևաբար, որքան կարճ է բնական ցերեկվա տևողությունը, այնքան ավելի երկար պետք է լինի արհեստական (էլեկտրական) լուսավորության տևողությունը, իսկ դրա համար անհրաժեշտ է գիտենալ բնական լույսային օրվա տևողությունը տվյալ աշխարհագրական գոտում: Ստորև բերված աղյուսակում ցույց է տրված բնական ցերեկվա տևողությունը Նրևանի պայմաններում, ըստ ամիսների:

Օգտվելով այդ աղյուսակից, դժվար չի լինի որոշել, թե տվյալ ամսում որքան պետք է լինի արհեստական լուսավորության տևողությունը թռչնանոցում: Ասենք՝ թռչնաբուծական ֆերման սկսել է լրացուցիչ լուսավորության օգտագործումը հոկտեմբերի 15-ից: Հոկտեմբերին բնական ցերեկվա միջին տևողությունը կազմում է 11 ժամ 12 րոպե, հետևաբար լրացուցիչ լուսավորության տևողությունը պետք է լինի 3 ժամ 48 րոպե, կամ, կլորացրած թվով՝ 4

**Լույսային օրվա Տեղումները Երևանի պայմաններում բաժանված  
(Երևանի աստղագիտաբանի տվյալներով)**

| <b>Ամսաթիվը և ամիսը</b> | <b>Ցերեկյա<br/>տեղումներ</b> |              | <b>Գիշերյա<br/>տեղումներ</b> |              |
|-------------------------|------------------------------|--------------|------------------------------|--------------|
|                         | <b>ժամ</b>                   | <b>բոլոր</b> | <b>ժամ</b>                   | <b>բոլոր</b> |
| 1 հունվարի              | 9                            | 22           | 14                           | 48           |
| 15 »                    | 9                            | 36           | 14                           | 24           |
| 1 փետրվարի              | 10                           | 07           | 13                           | 53           |
| 15 . »                  | 10                           | 38           | 13                           | 22           |
| 1 մարտի                 | 11                           | 16           | 12                           | 44           |
| 15 »                    | 11                           | 54           | 12                           | 06           |
| 1 ապրիլի                | 12                           | 37           | 11                           | 23           |
| 15 »                    | 13                           | 14           | 10                           | 46           |
| 1 մայիսի                | 13                           | 53           | 10                           | 07           |
| 15 »                    | 14                           | 24           | 9                            | 36           |
| 1 հունիսի               | 14                           | 51           | 9                            | 09           |
| 15 »                    | 15                           | 02           | 8                            | 59           |
| 1 հուլիսի               | 15                           | 00           | 9                            | 00           |
| 15 »                    | 14                           | 47           | 9                            | 13           |
| 1 օգոստոսի              | 14                           | 19           | 9                            | 41           |
| 15 »                    | 13                           | 50           | 10                           | 10           |
| 1 սեպտեմբերի            | 13                           | 07           | 10                           | 53           |
| 15 »                    | 12                           | 30           | 11                           | 30           |
| 1 հոկտեմբերի            | 11                           | 48           | 12                           | 12           |
| 15 »                    | 11                           | 12           | 12                           | 48           |
| 1 նոյեմբերի             | 10                           | 30           | 13                           | 30           |
| 15 »                    | 10                           | 00           | 14                           | 00           |
| 1 դեկտեմբերի            | 9                            | 31           | 14                           | 29           |
| 15 »                    | 9                            | 18           | 14                           | 42           |

**Ծանոթություն.** Յուրաքանչյուր ամսվա 15-ի թվերը միաժամանակ ցույց են տալիս ցերեկյա և գիշերյա միջին տեղումները տվյալ ամսում:

Ժամ: Ուրեմն պետք է թռչնանոցում, մութն ընկնելիս, 3 ժամ տևողությամբ էլեկտրական լուսավորությունը միացնել, իսկ 1 ժամ տևողությամբ էլ պետք է միացնել առավոտյան լույսը բացվելուց առաջ: Հոկտեմբերին մութն ընկնում է երեկոյան մոտավորապես ժամը 6-ին և լուսանում է 7-ին: Հետևաբար, երեկոյան լուսավորությունը պետք է միացնել ժամը 6-ին և հանգցնել ժամը 9-ին, իսկ առավոտյան պետք է միացնել ժամը 6-ից մինչև լուսանալը, այսինքն ժամը 7-ը: Հայաստանի պայմաններում նպատակահարմար է լրացուցիչ լուսավորությունն օգտագործել հոկտեմբերի 1-ից, բայց ոչ ուշ հոկտեմբերի 15-ից: Մի շարք տարիների ընթացքում մեր կատարած դիտական և արտադրական փորձերը ցույց են տվել, որ լրացուցիչ լուսավորության օգտագործման վերը նշված ժամկետները ամենից նպատակահարմարն են: Այդ փորձերը միաժամանակ ցույց են տվել, որ նորմալ կերակրման և պահպանման պայմաններում լրացուցիչ լուսավորության օգտագործումը ավելացնում է ոչ միայն աշնան-ձմռան ամիսների ձվատվությունը, այլև տարեկան ձվատվությունը 20—30 և երբեմն ավելի բարձր տոկոսով:

Լրացուցիչ լուսավորության բարենպաստ ազդեցությունն ավելի ցայտուն է արտահայտվում, երբ այն կիրառվում է տեղական հավերի և առհասարակ ցածր մթերատվություն տնեցող ածանցների նկատմամբ:

Լրացուցիչ լուսավորության օգտագործումն առավել անհրաժեշտ է թռչունների վանդակային պահպանման պայմաններում և այն, որպես պարտադիր զոոտեխնիկական միջոցառում, լայնորեն կիրառվում է բոլոր թռչնաբուծական ֆաբրիկաներում:

## ԻՆՏԵՆՍԻՎ ԹՈՉՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԴԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վերևում մենք կանգ առանք մեր երկրի տարբեր մարզերում, երկրամասերում և ռեսպուբլիկաներում ստեղծված ինտենսիվ թռչնաբուծության առաջավոր տնտեսությունների փորձի վրա: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ մեր ռեսպուբլիկայում նույնպես

կան բարենպաստ պայմաններ ինտենսիվ թռչնաբուծության զարգացման համար: Հացահատիկի արտադրության ավելացումը ռեսպուբլիկայում ընթացիկ հնգամյակում մոտ 1,5 անգամ, եգիպտացորենի ցանքատարածությունների զգալի ընդլայնումը, բամբակագործության հետագա զարգացումը (գլխավորապես բերքատվության բարձրացման ուղղությամբ), որի շնորհիվ նկատելիորեն կավելանա նաև բամբակի քուլալի արտադրությունը (որը թռչունների համար սպիտակուցային կերի հարուստ աղբյուր է հանդիսանում), հնարավորություն են տալիս թռչնաբուծության համար կերի կայուն բազա ստեղծելու կոլտնտեսություններում և սովխոզներում: Թռչնաբուծության մթերատվության բարձրացման և մասնավորապես ինտենսիվ թռչնաբուծության զարգացման համար բացառիկ կարևոր նշանակություն ունի կոմբիկերների և կերի դրոժների արտադրությունը: Ռեսպուբլիկայում արդեն գործում է կոմբիկերների բավական խոշոր գործարան: Հնարավորություններ կան գյուղատնտեսության և արդյունաբերության մնացուկների բազայի վրա ստեղծելու նաև կերի դրոժների արտադրություն, որոնք բարձր մոլեկուլային սպիտակուցների և վիտամինների հարուստ աղբյուր են հանդիսանում գյուղատնտեսական թռչունների և մյուս մթերատու կենդանիների համար: Թռչունների համար կերի լրացուցիչ աղբյուր են հանդիսանում նաև խաղողի վերամշակման մնացուկները, մասնավորապես կորիզը, որն իր սննդարար արժեքով գրեթե չի դիջում ցորենի հատիկի մնացորդին: Թիթեռնածաղկավոր բազմամյա խոտաբույսերի կուլտուրան լայն կիրառում է գտել ռեսպուբլիկայի գրեթե բոլոր կոլտնտեսություններում և սովխոզներում, իսկ այդ խոտաբույսերը թե՛ կանաչ և թե՛ չոր վիճակում A վիտամինի, ինչպես նաև սպիտակուցների բավական հարուստ աղբյուր են և կարող են կազմել թռչունների կերաբաժնի կարևոր բաղկացուցիչ մասը:

Հայաստանի կոլտնտեսությունների մեծ մասն ունի նորակառույց տիպային թռչնանոցներ, մյուսները ձեռնարկել են այդպիսիների կառուցումը:

Վերջին տարիներս ռեսպուբլիկայում ստեղծվել է ինկուբատորային-թռչնաբուծական կայանների բավական հզոր պարկ: Գոր-

ծող 13 ինկուբատորային-թռչնաբուծական կայանները տարեկան ինկուբացիայի են ենթարկում ավելի քան 1,5 միլիոն ձուռ և կուտնատեսություններին ու բնակչությանը վաճառում են, աճեցնելու համար, 1200 հազարից ավելի ձուռ: Անհրաժեշտության դեպքում այդ կայանների պարկը կարող է զգալիորեն ավելացնել իր արտադրական կարողությունը և ձտերի թողարկումը հասցնել տարեկան մինչև 2—2,5 միլիոն հատի:

Առանց որևէ դժվարության կարելի է տեղում, արտադրական և շինարարական ձեռնարկություններում, ինչպես նաև կուտնատեսություններում կազմակերպել փայտյա վանդակների արտադրությունը: Մի քանի ձեռնարկություններ և արհեստանոցներ անցյալ տարվա սկզբից արդեն հաջողությամբ յուրացրել են վանդակների և նրանց կահավորման դետալների արտադրությունը: Դրանց թվումն են՝ Հայկական ՍՍՌ Մսեղենի և կաթնեղենի արդյունաբերության մինիստրության № 13 շին-մոնտաժային վարչության արհեստանոցը, Տեղական արդյունաբերության մինիստրության ցինկապատ ամանեղենի գործարանը, նույն մինիստրության էջմիածնի շրջանի տեղարդկոմբինատը և Երևանի թռչնաբուծական ֆաբրիկայի արհեստանոցը: Ինչպես տեսնում ենք, ռեսպուբլիկայում կան անհրաժեշտ պայմաններ՝ ինտենսիվ թռչնաբուծության լայն զարգացման համար:

Կարող է հարց ծագել, թե Հայաստանի բնակչի մայան պայմաններում հնարավոր է արդյոք կիրառել թռչունների պահպանման ինտենսիվ մեթոդը: Մեր կողմից Հայաստանում ձուտերի վանդակային աճեցման նախնական փորձեր դրվեցին Հայկական ՍՍՌ Գյուղատնտեսության մինիստրության Անասնապահական ինստիտուտի Արաբկիրի հենակետում դեռ 1953 թվականին, հետագայում, 1954 թվականին, այդ փորձերը կրկնվեցին նույն ինստիտուտի Չարբախի էքսպերիմենտալ բաղայում և ապա 1955 թվականի ինկուբացիոն սեզոնում լայն արտադրական փորձեր դրվեցին Լենինականի թռչնաբուծական սովխոզում, որտեղ վանդակային եղանակով աճեցվեց մի քանի հազար ձուռ:

1956 թ. ընթացքում Երևանի թռչնաբուծական ֆաբրիկայում վանդակային սխստեմով աճեցվեց 60 հազար ձուռ: Փորձերը ցույց

տվին, որ մատղաշների աճեցման վանդակային սիստեմը, սովորական եղանակի համեմատությամբ, մի շարք առավելություններ ունի, հենց մեր ռեսպուբլիկայի պայմաններում կիրառելու դեպքում: Հետաքրքրական է նշել, որ հիմնական շենքի կառուցումը ավարտված չլինելու պատճառով, ճտերի վանդակային աճեցման համար սկզբնական շրջանում օգտագործվում էր սովորական տիպային թռչնանոցը՝ 72 մետր երկարությամբ և 5,5 մետր լայնությամբ: 1955 թվականին, երբ ճտերը դեռ պահվում էին սովորական եղանակով, հատակի վրա, այդ շենքում տեղավորվում էր մոտ 8 հազար ճուռ, իսկ վանդակային սիստեմին անցնելը հնարավորություն տվեց այդ նույն տարածության վրա պահել մոտ 40 հազար ճուռ: Ճտերը վանդակներում աճեցվում են հաջողությամբ, անկումները 7—8%-ից չեն անցնում:

Ֆաբրիկայում տարվող գիտա-արտադրական փորձերը և դիտողությունները հնարավորություն կտան մշակելու ռեսպուբլիկայի բնական պայմաններին առավել համապատասխանող ինտենսիվ թռչնաբուծական եղանակներ, քանի որ այդ եղանակները մեզ մոտ կիրառվում են առաջին անգամ և մի շարք հարցեր կարոտ են ուսումնասիրության ու պարզաբանման:

Նպատակահարմար է թռչնաբուծական ֆաբրիկաներ կառուցել նաև մեր ռեսպուբլիկայի մյուս արդյունաբերական շրջաններում, առաջին հերթին Զանգեզուրում, Ղափանում, կամ Սիսիանում և Ալավերդու ու Կիրովականի շրջաններում:

Ժամանակն է նաև լենինականի թռչնաբուծական սովխոզը վերածելու թռչնաբուծական ֆաբրիկայի:

Ինտենսիվ թռչնաբուծությունը կարող է զարգանալ նաև ռեսպուբլիկայի խոշոր կոլտնտեսություններում, հատկապես հացահատիկային մեծ ցանքատարածություններ ունեցող կոլտնտեսություններում:

Արդեն պայմաններ են ստեղծվել վերջ դնելու դաճաճ թռչնաբուծական ֆերմաներին, որոնք պահում են 100—200, իսկ երբեմն դրանից էլ պակաս թվով թռչուններ: Մեր ռեսպուբլիկայի գրեթե բոլոր կոլտնտեսությունները, փոքր բացառություներով, հնարավորություն ունեն ֆերմաներում պահելու 1000 հատից ոչ պակաս

ածաններ, իսկ շատ կոլտնտեսություններ կարող են պահել 2000—3000 և ավելի ածաններ: Այսպես, օրինակ, էջմիածնի շրջանի Միկոյանի անվան կոլտնտեսության ֆերմայում պահվում են 2000-ից ավելի ածաններ, շնայած որ այդ կոլտնտեսության հացահատիկային կուլտուրաների ցանքատարածություններն այնքան էլ մեծ չեն:

Հավարտածական ֆերման այդ կոլտնտեսության ամենաեկամտաբեր ճյուղերից մեկ է: 1956 թվականին, նույնիսկ ձմռան ամիսներին, ֆերմայում օրական ստանում էին մինչև 600—700 ձու: Մեր ռեսպուբլիկայի խոշոր կոլտնտեսություններում թռչնաբուծական ֆաբրիկաների կազմակերպումը հնարավորություն կտա ածանների գլխաքանակը այդ ֆերմաներում հասցնել մինչև 5—6, նույնիսկ 10 հազար հատի: Այդ ուղղությամբ պետք է ձեռնարկվեն պրակտիկ միջոցառումներ:

Թռչունների վանդակային աճեցման և պահպանման սխտեմի մասին մեր դասախոսությունների ժամանակ, ինչպես նաև թռչնաբուծական ֆաբրիկան այցելող բազմաթիվ էքսկուրսանտներ, գրեթե որպես վանոն, սովորաբար մեզ տալիս են հետևյալ հարցերը.

ա) երբ թռչունները կտրվում են բնական պայմաններից, զրկվում են զբոսանքից և երկար ժամանակ պահվում են վանդակների մեջ, արդյոք դա չի՞ ազդում նրանց առողջության, կենսունակության և մթերատվության վրա.

բ) վանդակներում պահելու ժամանակ արդյոք չի՞ ընկնում ձվի որակը, արդյոք չի՞ փոխվում նրա համը և քիմիական կազմը.

գ) կարելի՞ է արդյոք վանդակներում, առանց աքաղաղների, հավերից նորմալ ձվատվություն ունենալ և հնարավոր է արդյոք հավերի հետ միասին վանդակներում պահել նաև աքաղաղներ և ստանալ բեղմնավորված ձու և այդպիսի ձվերից նորմալ ճտեր կստացվե՞ն, թե՞ ոչ:

Բարեբախտաբար այդ բոլոր հարցերը մեծ մասամբ հատուկ փորձերի միջոցով ուսումնասիրվել են, և մենք հնարավորություն ունենք նրանց հիմնավորված պատասխաններ տալու:

Շնորհիվ բարձր ներվային գործունեության և պայմանական ռեֆլեքսներ մշակելու իրենց ընդունակության, թռչունները վան-

դակաների մեջ աճեցնելու դեպքում կարճ ժամանակա ինչոցում հարմարվում են նոր միջավայրի պայմաններին, մասնավոր երբ վանդականների մեջ աճեցվում են մեկ օրական հասակից, իսկ ճամբարային պահպանման շրջանն ավարտվելուց հետո նորից վանդականների մեջ են փոխադրվում մինչև ձվարկումն սկսվելը, այսինքն 135—140 օրական հասակը: Ինչպես ցույց են տվել դիտողությունները, վանդակային պահպանության ժամանակ թռչունների մթերատու կյանքը, ազատ, զբոսա-արոտային պահպանության համեմատությամբ, գրեթե չի կրճատվում, սակայն, որպես կանոն, վանդակներում ածանները 15—16 ամսական հասակից ավելի չեն պահվում, քանի որ 17—18 ամսական և ավելի հասակ ունեցող հավերի ձվատվությունը, սովորաբար, անկախ պահպանման եղանակից, մոտ 15—20%-ով պակասում է: Թռչնաբուծության ինտենսիվ եղանակի ամենակարևոր առավելություններից մեկն էլ հենց այն է, որ այդ եղանակի կիրառումը հնարավորություն է տալիս սխտեմատիկաբար խոտանել թե՛ հասակի և թե՛ այլ պատճառներով ձվատվությունը պակասեցրած թռչուններին և ազատված թռչնատեղերը լրացնել նոր, երիտասարդ ածաններով, դրանով իսկ ապահովելով տարեկան միջին բարձր ձվատվություն չորաքանչյուր հավից, կամ, ավելի ճիշտ կլինի ասել՝ չորաքանչյուր թռչնատեղից:

Եթե թռչունները վանդակներում ապահովվում են լիարժեք կերաբաժնով, հատկապես վիտամիններով (մասնավորապես A, D և B<sub>2</sub> վիտամիններով), թարմ ջրով, եթե շնքը սխտեմատիկաբար օդափոխվում է, վանդակները ժամանակին մաքրվում և շոր վիճակում են պահվում, ապա թռչունները վանդակների մեջ միշտ էլ լինում են առողջ, իրենց զգում են աշխույժ, կայտառ և մեծ ախորժակով ուտում են կերերը:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել կերաբաժինը D վիտամինով ապահովելու վրա: Ինչո՞ւ: Բանն այն է, որ վանդակների մեջ գտնվելու ժամանակ թռչունները զրկվում են արեգակի ճառագայթների բարերար ազդեցությունից, իսկ արեգակի ուլտրամանուշակագույն ճառագայթների ներգործության շնորհիվ թռչունների օրգանիզմում եղած նախավիտամինը (էրգոստերինը) վեր է

ածվում D (հակառակիտային) վիտամինի, որ շատ կարևոր է թռչունների օրգանիզմում նյութափոխանակության նորմալ ընթացքի համար: Ահա այդ պատճառով էլ վանդակային թռչունների կերաբաժնին ավելացնում են օրական 1 գրամ ձկան յուղ, որը պարունակում է 2,5 միկրոգրամ  $D_3$  վիտամին և լիովին ապահովում է թռչունի պահանջը: Խոշոր թռչնաբուծական ֆաբրիկաներում թռչուններին լուսավորում են ուլտրամանուշակագույն ճառագայթներով, որի շնորհիվ նրանց օրգանիզմում եղած D պրովիտամինը վեր է ածվում D վիտամինի, այլ կերպ ասած՝ արեգակի ճառագայթները փոխարինվում են արհեստական ուլտրամանուշակագույն ճառագայթումով:

Հատուկ փորձերի և քիմիական ու օրգանոլեպտիկ ուսումնասիրությունների միջոցով հաստատված է, որ վանդակներում պահվող թռչունների ձուն իր որակով թե՛ համի, թե՛ քիմիական բաղադրության տեսակետից ոչ միայն ոչնչով չի գիշում ազատ եղանակով պահվող ածանցների ձվին, այլև հաճախ, մանավանդ կարոտինի և A վիտամինի պարունակության տեսակետից, նույնիսկ գերազանցում է նրանց:

Այն հարցին, թե կարելի է արդյոք վանդակներում, առանց աքաղաղների, հավերից նորմալ ձվատվություն ստանալ և հնարավոր է արդյոք հավերի հետ միասին (վանդակներում) պահել նաև աքաղաղներ և ստանալ բեղմնավորված ձու—նույնպես պետք է պատասխանենք դրականորեն:

Նախ պետք է գիտենալ, որ անկախ պահպանման եղանակից, ձու ածելու համար աքաղաղի ներկայությունն անհրաժեշտ չէ, ձուն ածանի օրգանիզմում ձևավորվում է անկախ արականի սերմնաբջջի (սպերմատոզոիդի) մասնակցությունից: Աքաղաղի մասնակցությունն անհրաժեշտ է միայն այն դեպքում, երբ հարկավոր է ստանալ բեղմնավորված ձու՝ ինկուբացիայի, կամ բնական եղանակով ճուտ ստանալու համար:

Վերջին տարիներս հետազոտողներից ոմանց դրած փորձերը ցույց են տվել, որ աքաղաղների ներկայությունը երամում որոշ չափով նպաստում է թռչունների ձվատվության բարձրացմանը, բայց կան նաև հակասական տվյալներ: Անվիճելի է այն փաստը,

Հայկական ՍՍՌ Գյուղատնտեսության մինիստրության Անաս-  
նապահական և անասնաբուժական գիտա-հետազոտական ինստի-  
տուտի Չարբախի էքսպերիմենտալ բազայում, որտեղ թռչունները  
նույնպես պահվում են սովորական եղանակով, վերջին տարիները  
ընթացքում ստեղծված նոր ցեղային խմբի հավերի տարեկան մի-  
ջին ձվատվությունը 1953—1955 թթ. կազմեց 133—135 հատ, իսկ  
սելեկցիոն խմբերում միջին ձվատվությունը հասնում է 155 հատի:

Այս օրինակները ցույց են տալիս, որ մեր ռեսպուբլիկայի  
պայմաններում ևս, սովորական եղանակով պահելու դեպքում էլ  
գյուղատնտեսական թռչուններից կարելի է բարձր ձվատվություն  
ստանալ, իսկ յուրաքանչյուր ածանից 110—115 ձու կարող է ստա-  
նալ ամեն մի ֆերմա, յուրաքանչյուր տնտեսություն, շխոսելու  
այլևս սովխոզների և թռչնաբուժական ֆաբրիկաների մասին:  
որոնք կարող են և ստանում են անհամեմատ ավելի բարձր ձվա-  
տվություն՝ տարեկան 150-ից մինչև 200 և ավելի ձու յուրաքան-  
չյուր ածանից:

Երկրում անասնաբուժական մթերքների առատությունը ստեղ-  
ծելու համար անհրաժեշտ է է՛լ ավելի ուժեղացնել անասնաբու-  
ժության հետ մնացող ճյուղերի զարգացման տեմպը, իսկ հետ մնա-  
ցող ճյուղերից է, ամենից առաջ, թռչնաբուժությունը:

Թռչնաբուժության ինտենսիվ եղանակը անասնաբուժության  
այդ ճյուղի արագ զարգացման ամենաէֆեկտավոր միջոցառում-  
ներից մեկն է և պետք է լայն կիրառում գտնի մեր երկրում:

Հեղինակ՝ ՍԱՀԱԿ ԿԱՐԱՊԵՏԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Պատ. խմբագիր՝ Ա. ԵՐԻՑՅԱՆ

Հրատ. խմբագիր՝ Հ. ՍԻՆԱՆՅԱՆ

Ավագ սրբագրիչ՝ Ս. ՇԱՀԲԱԶՅԱՆ

ՎՖ 01319:

Պատվեր 398:

Տիրաժ 4000:

Հանձնված է արտադրության 27/1 1957 թ.: Ստորագրված է  
տպագրության 20/11 1957 թ.: Թուղթ՝ 84×108<sup>1</sup>/<sub>32</sub>, տպ. 2,5 մամ.:  
Գինը՝ 80 կոպ.:

ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության հրատարակչությունների  
և տրիգրաֆ արդյունաբերության Գլխավոր վարչության  
№ 6 տպարան, Երևան, Լենինի պողոտա № 51:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0028026

ԳԻՆԸ 80 Կ.

II  
2452